31.10.2022
350-74

Դատական դեպարտամենտի ղեկավար
Նաիրի Գալստյանին

Տեղեկություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գալստյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ հոկտեմբերի 17-ին մուտքագրված 350-69 հարցմանն ի պատասխան ուղարկված գրության մեջ Դատական դեպարտամենտը չի տրամադրել պատշաճ հղում, այլ որպես պահանջվող տեղեկություն ստանալու հարթակ նշել է պաշտոնական կայքի հասցեն, ինչը հնարավորություն չի տալիս տեսնել հարցմամբ պահանջվող տեղեկությունները:

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ, թե 2021 թվականի ընթացքում ՀՀ դատարանները քանի հեռախոսային խոսակցության ձայնագրման թույլտվություն են տվել կամ տրամադրել ակտիվ հղում կայքի այն ենթաբաժնից, որտեղ կարելի է գտել վորոնշյալ վիճակագրությունը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, հեռ +37491407836, էլ. հասցե՝ foi@foi.am կայք՝ www.foi.am